ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿՈՆԴԱԿԸ ԱՆԳԼԻԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ ՀՈԳԵՇՆՈՐՀ ՖԻԼԻՊ ՍԹՈՐ ՎԵՆԹԸՐԻՆ «Մ. ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼԻ» ՇՔԱՆՇԱՆՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ ԱՌ ՍԻՐԵՑԵԱԼ ԲԱՐԵԿԱՄՆ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑԻՈՅՍ ԵՒ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԵԱՆՍ ՀՈԳԵՇՆՈՐՀ ՖԻԼԻՊ ՍԹՈՐ ՎԵՆԹԸՐ, ՈՐ Ի ՄԻԱՑԵԱԼ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆ

Համայն հայութեան հոգեւոր կենտրոն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Մեր ջերմ ողջոյնը, սրտաբուխ բարեմաղթանքներն ու Հայրապետական օրհնութիւնն ենք բերում Ձեզ՝ Քրիստոսի հաւատարիմ զինուորիդ եւ հայ ժողովրդի ու Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու սիրելի բարեկամիդ:

Հոգեշնորհ Հայր Ֆիլիպ, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Անգլիկան քոյր Եկեղեցու ներկայացուցչի պաշտօնում Ձեր ծառայութեան առիթով Մենք հնարաւորութիւն ունեցանք ճանաչելու Ձեզ եւ Ձեր արդիւնաշատ գնահատելի գործունէութիւնը:

Ջօրացած Տէր Յիսուս Քրիստոսի շնորհով, Դուք, որպէս Տիրոջ հաւատարիմ սպասաւոր, հոգու եւ մտքի Ձեր կարողութիւններն անձնուիրաբար ի սպաս էք դնում Հայ եւ Անգլիկան քոյր Եկեղեցիների միջեւ էկումենիկ յարաբերութիւնների զօրացմանն ու ամրապնդմանը, կենաց խօսքի սրբազան առաքելութեան իրականացմանը եւ առաքելական ոգին նորոգելու աստուածահաճոյ նպատակին: Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի նորընծայ երիտասարդ միաբանների ուսումը խորացնելու նպատակին բերած Ձեր աջակցութիւնը, ինչպէս նաեւ Հայաստանի ու Անգլիայի բանտերի հոգեւոր սպասաւորների փոխադարձ այցելութիւնները նախաձեռնելու եւ կազմակերպելու Ձեր ջանքերը խօսուն վկայութիւն են մեր երկրում Ձեր աստուածահաճոյ բազմարդիւն ծառայութեան: Մենք մշտապէս յիշելու ենք Ձեզ որպէս սիրելի բարեկամի, ով իր հոգում կրում է անգլիացի ժողովրդի ազնուութիւնը, բարի կամեցողութիւնը եւ մանաւանդ՝ հաւատաւոր նկարագիրը:

Ձեր ծառայութեանց ու վաստակի բարձր գնահատանքով, Հայաստանում Ձեր պաշտօնավարութեան աւարտի առիթով, Հայրապետական այսու Կոնդակով շնորհում ենք Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու

ՍՈՒՐԲ ՆԵՐՍԷՍ ՇՆՈՐՀԱԼԻ

պատուոյ բարձր շքանշանը:

Ի խորոց սրտի Մեր աղօթքն ու բարի մաղթանքն է, որ Տէրն առատապէս օրհնի Ձեզ եւ յարանորոգ յաջողութիւններ պարգեւի Ձեր բոլոր գործերին ու ծրագրերին:

Եւ թող Բարին Աստուած Իր օրհնութեան ներքոյ խաղաղ ու անվրդով, եղբայրական սիրոյ ու համագործակցութեան մէջ պահի աշխարհը համայն եւ քրիստոնէական բոլոր Եկեղեցիները:

«Ողջ լերուք ի Տէր, զօրացեալ շնորհօք Սուրբ Հոգւոյն եւ յաւէտ օրհնեալ ի Մէնք. ամէն»:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 12-ն Օգոստոսի
յամի Տեառն 2002 եւ ի թուին հայոց ՌՆԾԱ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 103